տակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանութիւնը: Դեռ մնում էին հին քաղաքների աւերակները, որոնց փշրանքի մէջ երեւում էր հայ մարդու արհեստը եւ ճարտարութիւնը, որոնք քարոզում էին, թէ որքա՜ն հանգիստ էր քաղաքացու կեանքը, որքա՜ն զարգացած էր նրա մէջ գիտութիւնը: Դեռ բոլորովին չէին անհետացել հետքերը բազմաթիւ ջրանցքների, ստորերկրեայ խողովակների, որոնք ցանցատեսակ հիւսուածքով տարածուել էին ընդարձակ դաշտերի վրայ, անցնում էին ամենադժուարին լեռների եւ բլուրների միջով, որոնք ցոյց էին տալիս, թէ որքան ծաղկած էր մշակ մարդու գործը, որքան նա սերտ կերպով կպած էր բնութեան եւ երկրի հետ:

Իսկ այժմ տիրում էր անապատ եւ ամայութիւն...

Մի բան, որ մնացել էր անջնջելի թէ ժողովրդի սրտի մէջ եւ թէ երկրի վրայ, դա էր կրօնքը եւ նրան արտայայտող յիշատակարանները: Ամէն տեղ, անմարդաբնակ եւ խուլ ձորերի մէջ հանդիպում էին հսկայակապ վանքեր, ուր տօնական հանդէսների ժամանակ միայն հաւաքւում էր ուխտաւորների բազմութիւնը, իսկ այնուհետեւ նրա շեմքը չէր կոխում աղօթողի ոտքը: Միայն միաբան աբեղաները ամենայն ջերմեռանդութեամբ կատարում էին սովորական ժամերգութիւնները: Բլուրների վրայ, լեռների խորին ծոցերում, ցրուած էին անթիւ մատուռներ, որոնք կրում էին իրանց մէջ այս եւ այն ճգնաւորի մարմնի փշրանքը: Սարերի անմատչելի տեղերում տեսնւում էին մթին քարանձաւներ, ուր միայնակեացները, հեռանալով աշխարհի աղմուկից, նոիրել էին իրանց աստծուն: Այս քարանձաւները, երեւի, մի ժամանակ նախնական մարդիկների բնակարաններ էին, որ յետոյ դարձան ճգնաւորների ապաստարաններ: Քիչ չէր այն յիշատակութիւնների թիւը, որոնք կոչւում էին «խաչքար» կամ «թուխմանուկներ». դրանք կանգնած էին զանազան բարձրաւանդակների վրայ, ուր մի նահատակ թափել էր իր արիւնը հաւատքի համար, կրօնական հալածանքների ժամանակ: Ժողովուրդը ջերմեռանդութեամբ յարգում էր սուրբի յիշատակը եւ ծխում էր այնտեղ իր խունկը: Իսկ եկեղեցիները ոչ թիւ ունէին եւ ոչ համար: Իւրաքանչիւր գիւղ, որ բաղկանում էր մի քանի գետնափոր խրճիթներից, ունէր մի փառաւոր եկեղեցի: Իսկ այն հոյակապ տաճարը շատ հին ժամանակների գործ էր, երբ գիւղի ժողովուրդը բազմաթիւ էր եւ հարուստ, եւ ոչ այնպէս աղքատ եւ փոքրաթիւ որպէս այժմ:

Ես մոռացել եմ բոլոր վանքերի անունները, որոնք գտնւում էին իմ նկարագրած գաւառներում, բայց մի քանիսը դեռ յիշում եմ: Մագոայ գաւառումն էր սուրբ Թադեւոս առաքելոյ վանքը, որը մեր Աբգար թագաւորի խնդ-